ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<08>> ----------հուլիս----------2025թ. N ՄՈ/ 659 -Ա

ք. Արմավիր

«ԱՅԳԵՇԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Սուսաննա Խաչատրյանի 2025 թվականի հուլիսի 7-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Այգեշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սուսաննա Խաչատրյանին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2025 թվականի հուլիսի 21-ից օգոստոսի 22-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Սուսաննա Խաչատրյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Այգեշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Այգեշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Սալբի Թարոյանին:
3. «Այգեշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Սալբի Թարոյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հուլիսի 21-ից օգոստոսի 22-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Սուսաննա Խաչատրյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 25-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-07-08 17:02:13 GMT+4
Հավաստված է eID-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**